

## ՆԿԱՐԱԳԻՐ

### առաջարկվող ապրանքի ամբողջական

Բիզնես Էլիտա ՍՊԸ-ն ԵԶ-ԷԱՃԱՊՁԲ-25/61 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում  
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	<p>Մետաղական հիմնակմախքով և փայտյա նստատեղերով նստարանի տեխնիկական բնութագիր: Մետաղական հիմնակմախքով և փայտյա նստատեղերով նստարանը պատրաստված կլինի առնվազն 2000x900մմ չափսերի: Մետաղական հիմնակմախքը պատրաստված կլինի քառակուսի կտրվածքով խողովակից /40x40x3մմ/ նստարանի 2 կողամասերում՝ եռակցումով /եռակցվող մասերը հղկել հղկաքարով/: Մետաղական կողամասերի բարձրությունը կլինի 630մմ: Մետաղյա կողամասերի ոտքերի ստորին մասում եռակցված կլինի 3մմ հաստությամբ առնվազն 70x70մմ չափսերի 4 մետաղական թիթեղներ՝ յուրաքանչյուրի վրա 4 անցքեր, հարթակին /հատակին/ ամրացնելու համար: Նստարանի անմիջապես նստատեղի տակ /փայտյա մասերի տակ, առջևում և ետնամասում/ 2 մետաղական կողամասերին եռակցված կլինեն 2 հատ 40x40 մմ չափսերի քառակուսի կտրվածքով խողովակից, մետաղի հաստություն 2մմ, իսկ վերևի մասը միացված լինի 40x40x4 քառակուսի կտրվածքով խողովակով: մետաղական 2 կողամասերին՝ նստատեղի փայտերի ամրացման համար, եռակցված կլինեն պողպատյա թերթով՝ 40x4մմ առնվազն 460մմ երկարության, իսկ հենակի փայտերի ամրացման համար՝ պողպատե թերթով 40x4մմ 300մմ երկարության: Նստարանի մեջտեղում՝ նստատեղի փայտյա մասերի տակ և հենակի փայտյա մասերի տակ, տեղադրել 40x4մմ հաստությամբ մետաղաթերթ, իսկ փայտյա մասերին՝ հեղյուս և մանեկով ամրացված նստարանի հենակին/4հատ/ և նստատեղին /5 հատ/ 2 մետաղական կողամասերին հեղյուսով և մանեկով, ամրացված կլինեն 1900x60x40մմ չափսերի չորացրած հաճարի հղկված փայտյա մասեր՝ նստատեղի մասերում եզրերը կլորացված: Մետաղական մասերը ներկված կլինեն երկշերտ /գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ/: Փայտյա մասերը</p>

լաքապատված կլինեն հաճարի գույնը մգեցնող լաքով:Թիկնակի վերին փայտյա մասի վրա, լազերային փորգրությամբ, փորագրված կլինի „ՆՈՐ ՆՈՐՔ„: Նստարանների տեղադրումը իրականացնել պատվիրատուի ներկայացված հասցեներով: Նստարանի մետաղական հիմնակմախքի /կորացումները/ պատրաստված կլինի պատվիրատուի կողմից ներկայացված լուսանկարին համաձայն:





## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

### предлагаемого товара

Бизнес Элита ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЕР-ЕЦДЦПЗР-25/61 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	